խաթունն, գկենդանիքն և զհանգուցեալքն ի Քս. (Հաշկպ Ցուց. Թ. 83)։

ՍԱՐԳԻՍ ԿՐՕՆԱՒՈՐ.— 1603ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ Նարեկ մը (ՄՁ. Թ. 1215), որուն արդէն ստացողն եղած է ըստ հետևեալ յիշատակարանին. «յիշեցէք ի Քս. զվերջին ստացող լուսազարդ սբ. տառիս, որ կոչեցեալ Նարեկացի, զտէր Սարգիս... կրօնաւորն. և Ա.Ծ. ողորմի ասացէք իւրն եւ ծնողացն, հօրն Թորոսին և մօրն Դիմիթրին, և եղբայրցն Աբրահամին, Սինանին, և Մուրատին և մեծ պապուն տէր Աստուածատուրին և իւր կողակցին Խոնդին...։ Եւս առաւել ինձ մեղապարտ Գրիգորիս կազմողի...։ Դարձեալ յիշեցէք զտէր Սարգիս կրօնաւորն որ ստացաւ զսբ. գիրքս և ետ վերստին նորոգել և եդ ի դուռն սբ. Յակոբայ, ի սբ. քաղաքս երուսաղէմ... ի թվին ՌԾԲ (=1603)...։»։ (Խապ. Ցուց. տետր ԻԹ. էջ 2164)։

ՍԱՐԳԻՍ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ.— Քրձ. Ծ. 1850ին, Երուսաղէմ գալով 1880ին Ս. Յակոբի վանքին մէջ կը մտնէ քրձազգեացներու շարքը, պարբերաբար կը պարապի վանքին մէջ հացագործի, սեղանապետի, լուսարարի և սենեկապետի գործերով։ Իր անձնական ծախքով նորոգած է Համբարձման լերան տեսչարանը։ Դարձեալ իր ծախքով շինել տուած է հետևեալները. երկու մթերանոց Ս. Հրեշտակապետի եկեղեցիին մօտ. մէկ մթերանոց մեծ օթելին տակ, և վեց մթերանոց Ռեմլէի մէջ. սոյն մթերանոցներուն եկամուտը Պաղտասարեան ինքը պիտի գանձէ իր կենդանութեան, իսկ յետ մահու պիտի ճեան իբր կալուած Ս. Յակոբի վանքին։

ՍԱՐԳԻՍ Պ. (1281—1313).— Սարգիս պտրք. Սսոյ Ե. (1307) և Ատանայի(1309) ժողովներու կանոնները՝ հայ եկեղեցւոյ ոգւոյն հակառակ նկատելով՝ չգործադրեց. և այս պատճառով Սսոյ կաթողիկոսարանին իրաւասութենէն ելնելով՝ Ս. Յակոբի վանքին անկախութեան համար դիմեց Եգիպտոսի ամիրապետին՝ որմէ ստացաւ ի նորոյ պատրիարքական հրովարտակ (Ցպե. էջ 42—43. Զամչ. Գ. էջ 312—13)։

ՍԱՐԳԻՍ Պ. (1393—1417). Նշ. Խրիմի, ուրկէ նուէր բերած է ճաշոց գիրք մը Ս. Յակոբի վանքին համար (ՄՁ. Թ.